ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

«20» հոկտեմբերի 2023թ. No 24/1-Ք

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«Դոնեռ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերաբերյալ

Գնման ընթացակարգի ծածկագիր՝ **ՀՀ-ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-23/24-Ք**

Մասնակից՝ **«Դոնեռ» ՍՊԸ**

/ՀՎՀՀ՝ 01052798, գործունեության հասցե՝ ք.Երևան Գայի 51/5

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կարիքների համար գրասենյակային կահույքի ձեռքբերման նպատակով 23.10.2023թ. հայտարարվել է ՀՀ-ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-23/24-Ք ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգը, որին հայտ է ներկայացրել նաև «Դոնեռ» ՍՊԸ-ն: Գնահատող հանձնաժողովը 07.11.2023թ.-ին կայացած նիստում արձանագրել է, որ «Դոնեռ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերը լրացված են հրավերի պահանջներին ոչ համապատասխան. մասնավորապես՝ դիմում-հայտարարությունը հաստատված չէ էլեկտրոնային ստորագրությամբ, դիմում-հայտարարության մեջ սխալ է լրացված ընթացակարգի ծածկագիրը և չափաբաժինների քանակը, ներկայացված չէ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը, ներկայացված չէ իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիրը:

Սահմանված ժամկետում և սահմանված կարգի պահանջներին համապատասխան «Դոնեռ» ՍՊԸ-ն չի ներկայացրել շտկված փաստաթղթերը, որի հիման վրա գնահատող հանձնաժողովի 09.11.2023թ. թիվ 3 որոշմամբ կազմակերպության կողմից ներկայացված հայտը համարվել է հրավերի պահանջներին ոչ համապատասխան և հիմք ընդունելով ՀՀ

0015, Երևան, Մ. Խորենացի 3,7 Հեռ. +374 60 84 46 57
Կայք՝ www.petekamutner.am էլ. փոստ՝ secretariat@petekamutner.am

կառավարության N 526-Ն որոշման 42-րդ կետը հանձնաժողովը մերժել է «Դոնեռ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը:

1. Եզրահանգում

Վերոնշյալ կարգավորումների համատեքստում անդրադառնալով առկա փաստական հանգամանքներին՝ պետք է արձանագրել, որ ի հակադրություն հրավերի պահանջներին՝ որպես գնման գործընթացի մասնակից հանդես եկած «Դոնեռ» ՍՊԸ-ն՝ չներկայացնելով հրավերով սահմանված փաստաթղթերը, խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է Պատվիրատուի կողմից գնման գործընթացին «Դոնեռ» ՍՊԸ-ի հետագա մասնակցության դադարեցմանը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով, այն է՝ Լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա, որոշում եմ **«Դոնեռ» ՍՊԸ-ին** ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

ԷԴԳԱՐ ԳԵՎՈՐԳՅԱՆ